

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

**1. Վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության համայնքային ծառայության հարցերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 11-3.2-8)**

**2. Վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության համայնքային ծառայության հարցերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 11-3.2-9)**

**1-ին և 2-րդ կետերում նշված առաջատար մասնագետները իրականացնում են հետևյալ գործառույթները՝**

Մասնակցում են համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննության վարման, համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ իրականացվող վերահսկողության աշխատանքներին:

Մասնակցում են մարզերի (Երևանի քաղաքապետարանի) համայնքային ծառայողների վերապատրաստման ընթացքի դիտարկմանը և վերապատրաստում անցած համայնքային ծառայողների վերաբերյալ ստացված տեղեկությունների ամփոփման աշխատանքներին:

Մասնակցում են համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի և համայնքային ծառայողների ատեստավորման արդյունքների դեմ բերված բողոքների քննարկման աշխատանքներին, ինչպես նաև հանձնաժողովի անդամի կարգավիճակով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին:

Մասնակցում են Բաժնին վերապահված բնագավառին առնչվող հարցերով քաղաքացիների դիմումների, բողոքների քննարկման աշխատանքներին: Իրականացնում են պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

**Մրցույթը կանցկացվի 11.07.2017թ. ժամը 10:00-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության վարչական շենքում՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք 3:**

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

- պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում:

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

### **Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

ՀՀ քաղաքացին մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով ՀՀ անձնագիր:

### **Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 21.06.2017թ.**

ՀՀ քաղաքացիները մրցութին մասնակցելու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ:

(ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-357):